

որոնք ճիգ կ'արժէին մեզի: Կը յիշեմ ազգային պատմութեան մասին իրենց ճառագայթուն արգահատանքը: Անոնք տարօրինակ դիւրութեամբ կ'ըմբռնէին աւանդական յեղուժը ուսուցիչին եւ անոր քննական քաշքշուքները, մինչդեռ ինծի համար մինչեւ այսօր պարզ չէ մեր պատմութիւնը իբրեւ ուսում: Եւ էին խիստ, յամառ, նախայարձակ ու տարօրէն տոկուն: Դժուար աշխատանքը անոնց վայելքն էր կարծես ու կը կարդային, կը նութէին, լոյսը մութին խառնած, Վասպուրականի, մա՛նաւանդ աչազուրկ դաստիարակին վարկը փրկելու սատողոց մէջ, խորթ հայեր վերջապէս, քանի որ Ռչտունի ծովակէն ձուկ չէինք կերած: Աչազուրկ դաստիարակը իր մէկ նամակով Վասպուրականին ամբողջ անցեալը գրաւ կը հանէր առաջնութեան մրցանքի մը, առանց կասկածելու անհնարին տառապանքը, զոր անոր աշակերտները կը կրէին, դասարանին միջինին վրայ աչք ունենալու համար: Անշուշտ սորվելու, պաշար կրելու (դէպի գլուխը), հիմնական բաներով տարուելու իրենց եռանդին եւ հոտառութեան մէջ անոնք կը գերազանցէին մեզ բոլորս: Մաթիկէն դիտուած «տունն ի վեր» խա՛նդը, զոր յետոյ պիտի հաստատէինք բոլոր վասպուրական զարմին վրայ: Այս պնդութեամբ, իրապաշտութեամբ, իմացապէս ամէնէն նուազ օժտուածները մենէ, անոնք պահեցին իրենց դիրքերը:

Չեմ գիտեր ինչու, մինչեւ հիմա այս ընկերներուս յիշատակը խառնուած կը ներկայանայ ինծի առակին կրիային: Կաշիի ու ոսկորի դիմացկունութի՛ւն: Այո՛: Նոյն այդ յատկութիւնները, որոնք այսօր զանոնք տէրն են ըրած Երեւանու: Ա՛ն ալ Վան մը... Մաթիկ Մելիքխանեանց չէր ճանչցած Վանը: Ու չէր ալ հասկնար իմ ժպիտը, երբ իր խօսած պահուն, մտքիս կը բուսնէին երկու ընկերներս, դպրեվանքի հաստ մեր դասարանին մէջ, այդ պահուն քիթ քիթի Օրմանեան սրբազանի եկեղեցական պատմութիւնը վայել լրջութեամբ վերծանելու: Մէկը կրօնքի ուսուցիչ եղաւ անոնց: Միւսը՝ ամէն բան,